ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ԼՈՌԻՈՒՄ XIX Դ. ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿԻՆ

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ Հ. Հ.

1801 թ. հունվարի 18-ին հրապարակված՝ ցար Պավել I-ի՝ Քարթլի-Կախեթը Ռուսաստանին միավորելու մասին հռչակագրով Հյուսիսային Հայաստանի մի շարք շրջաններ, այդ թվում՝ Լոռին ու Տավուշը, դարձան Ռուսական կայսրության մաս՝ բացառապես հայ բնակչությամբ[1]: Ալեքսանդր I-ի 1801 թ. սեպտեմբերի 12-ի հռչակագրով պաշտոնապես ձևակերպվեց Արևելյան Վրաստանի (վերջինիս կազմում նաև՝ Լոռու, Փամբակի, Ղազախի ու Շամշադնի) միացումը Ռուսաստանին:

Հռչակագրով հաստատվում էին Վրաստանի բարձրագույն կառավարությունը և վարչական նոր բաժանումը. կազմավորվում էր Վրացական նահանգը, որի մեջ մտնում էին Վրաստանը և, այսպես կոչված՝ «թաթարական դիստանցիաները»՝ ուղեմասերը: Վրաստանն իր հերթին բաժանվում էր վարչական միավորների. Վերին Քարթլի (Դուշեթ կենտրոնով), Միջին Քարթլի (Գորի), Ներքին Քարթլի (Թիֆլիս), Սոմխեթ (Լոռի), իսկ «թաթարականը»՝ Բորչալուի, Ղազախի և Շամշադնի ուղեմասերի[2]: 1805 թ. մարտին Վրաստանի կազմում ստեղծվում է Փամբակ-Շորագյալի ուղեմասը՝ Փամբակի և Շորագյալի միավորմամբ[3]:

1801 թ. հետո ռուսական միապետությունը իր նորանվաճ երկրներում կատարեց ընդհանուր հաշվառում: Կազմված ցուցակները, որոնք հեռու են կատարյալ լինելուց, միայն մոտավոր պատկերացում են տալիս Քարթլի-Կախեթի գյուղերում և քաղաքներում բնակվող հայերի թվաքանակի մասին: Վիճակագրական տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ որ XVIII դ. ընթացքում Արևելյան Վրաստանի քաղաքային բնակչության էթնիկ կազմի մեջ լուրջ տեղաշարժեր չեն եղել: Միայն XIX դ. է հայտնվում ռուս ազգաբնակչությունը, հետևաբար հայերի տոկոսային ցուցանիշը XVIII դ. ավելի բարձր էր: Ռուսական պաշտոնական վիճակագրությունը Վրաստանում և նրան ենթակա հայկական տարածքներում XVIII դ. բնակվող հայերի թվաքանակի մասին տվյալներ չունի: Ըստ պրոֆ. Ս. Կակաբաձեի. «1770 թ. տեղեկության համաձայն օր.՝ Քարթլի-Կախեթի թագավորությունում, (առանց Ղազախի գավառի) բնակչության մեջ 52,8% ծուխը վրացի էին, 19%-ը՝ հայ, 17%-ը՝ թաթար, 10,9 %-ը՝ օս և այլք: Սրանից զատ, Ղազախ-Շամշադինում… կար 5200 ծուխ թաթար

---

[1] Մենրոպ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), Ալ. Երիցյանի արխիվ, թղթ. 157, վավ. 5, թ. 1-3, **Иоаннисян А. Р.,** *Россия и армянское освободительное движение в 80-ых годах XIX столетия, Е., 1990, с. 10.*

[2] **Шахатунян А.,** *Административный передел Закавказского края, Тбилиси, 1918, с. 84.*

[3] **Հայրապետյան Ա.,** Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին, Գյումրի, 2005, էջ 63:

և 2400 ծուխ հայ»[4]: 1770 թ. վավերագրի համաձայն՝ Քարթլի-Կախեթում, ներառյալ Դուշեթը և Փշավ-Խևսուրեթը, ինչպես նաև Ղազախ-Շամշադինը և Փամբակը, կար 42 հազար ծուխ: Վիճակագրության մեջ ընդունված կարգի համաձայն՝ շնչերի քանակը հաշվելու համար եթե ծխերի քանակը պայմանականորեն բազմապատկենք առնվազն 5-ով, կստացվի, որ Քարթլի-Կախեթում 1770 թ. բնակվել է 210 հազար մարդ[5]: Դրանցից 27-28 հազար հայերը, անգամ առանց Արևելյան Հայաստանի Ղազախ-Շամշադին, Փամբակ, Տաշիր, Աշոցք գավառների հայ ազգաբնակչության, կազմում էին Վրաստանի բնակչության մոտ 10 տոկոսը: Այսպիսով, XIX դ. սկզբին Վրաստանի բնակչության զգալի մասը կազմում էին հայերը[6]:

1827 թ. ապրիլին ֆինանսների նախարարը ներկայացնում է հաշվառման ծրագիր: Այն սկսվում է 1828 թ. և ավարտվում 1834 թ.: Հայաստանի հյուսիսային շրջանները, այդ թվում՝ Փամբակ-Շորագյալը, հաշվառվել են 1829 թ.[7]: Ըստ այդմ՝ Լոռու տարածքի բնակչության ազգային կազմը հետևյալն էր.

Վարչական միավորը	Գյուղե-րի թիվը	Տնտ. թիվը	արական բնակչու թ.	հայ	թաթար	վրացի	հույն	գերմա-նացի
Ղազախի դիստանցիա	69	4960	17632	4796	12836	-	-	-
Բորչալուի դիստանցիա	145	4092	13762	3634	8479	669	767	213
Փամբակ-Շորագյալի դիստանցիա	105	4897	16628	15913	546	-	169	-

1831 թ. Լոռու տարածքում կար 54 գյուղ՝ 2900 հայ բնակչությամբ, իսկ բնակչության ընդհանուր թիվը 10636 էր[8]:

Ժողովրդագրական կազմի ակնառու փոփոխություններ տեղի ունեցան և նոր բնակավայրեր առաջացան XIX դ. սկզբներից՝ կապված ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով հայ բնակչության արտագաղթի և ռուս զինվորական հրամանատարության կազմակերպած վերաբնակեցումների հետ: 1818-1930 թթ. Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան, այդ թվում՝ Լոռիում կատարված զանգվածային վերաբնակեցումների հետևանքով տեղի ունեցավ բնակչության թվի կտրուկ աճ: Ռուսաստանը մեծ նշանակություն էր տալիս նորահաստատ տարածքների վերաբնակեցմանը, այդ տարածքներում ապրող հայ ազգաբնակչության հետ տարվող

---

[4] **Մարտիրոսյան Վ.,** Վրաստանի հայոց թվաքանակը 18-րդ դարում (Պատմա-բանասիրական հանդես, 2001, N 2, էջ 165):

[5] Նույն տեղում, էջ 166:

[6] **Иваненко В.,** *Гражданское управление Закавказьем, Тбилиси, 1901, с. 29.*

[7] **Կորկոտյան Զ.,** Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1930 թթ.), Ե., 1932, էջ XXVII:

[8] **Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Եղյան Գ.,** Լոռու մարզ, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը (այսուհետև՝ Լոռու մարզ…), Ե., 2003, էջ 82:

քաղաքականությանը՝ նպատակ ունենալով վերջիններիս վերաբնակեցնել Վրաստանի սահմանամերձ տարածքներում, որոնք Աղա Մահմադ խանի արշավանքներից գրեթե ամայացել էին: «Հայերը,-գրում է Ալեքսանդր I-ը Վրաստանում ռուսական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Կ. Կնորինգին,- իբրև արտադրող և Ասիայի այդ մասի ամբողջ առևտուրն իրենց ձեռքը պահող ժողովուրդ, արժանի են ձեր առանձին ուշադրությանն ու պաշտպանությանը, որովհետև Պարսկաստանում այդ ժողովրդի ճնշման պարագայում կասկած չի կարող լինել, որ նրանք զանգվածաբար կհաստատվեն Վրաստանում (նկատի ունի նաև Լոռին-Ա. Հ.), եթե միայն իրենց ապահովված զգան կառավարության օրինավոր կարգավորմամբ»[9]: Դեռևս 1801 թ. Փամբակը Ռուսաստանին միացնելուց հետո զգալի թվով հայեր Կարսի նահանգից տեղափոխվում են այնտեղ[10]: Ռուսաստանին ենթակա Արևելյան Հայաստանի շատ տարածքներ անվտանգ չէին, ուստի արևմտահայ բազմաքանակ վերաբնակիչներ թողնում էին Հյուսիսային Հայաստանը և անցնում Վրաստանի խորքերը[11]: Միաժամանակ, Արևելյան Հայաստանից, այդ թվում՝ Փամբակից ու Շորագյալից փախած բնակիչներ էին հաստատվել նաև Արևմտյան Հայաստանում[12]:

XIX դ. առաջին 30-ամյակի ընթացքում տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետևանքով Ղարաքիլիսայի բնակչությունն ավելանում է ի հաշիվ Արևմտյան Հայաստանից՝ Կարսից, Արդահանից, Էրզրումից, Բայազետից ներգաղթածների:

1805 թ., երբ ռուսները նվաճում են Շուշիի ու Շաքիի խանությունները, Ղազախ գաղթած արցախցիների մի մասը ետ է վերադառնում, շատերն էլ մնում են և հիմնավորվում: Շնող գյուղում հաստատված արցախցիները, ենթարկվելով բնիկների ազդեցությանը, կորցնում են բարբառային և սովորութային առանձնահատկությունները: 1801 թ. դրությամբ, գյուղի բնակչության թիվը հասել է 538-ի[13]: Ըստ 1839 թ. մարտի 22-ի Վրացա-իմերեթյան թեմի հայ բնակչության մարդահամարի, Շնողի գերդաստանների թիվը հասնում էր 71-ի, որոնցից 308-ը՝ արական և 245-ը՝ իգական[14]:

Համամլու (Սպիտակ) գյուղի բնակչությունն ավելացել է նույն դարի սկզբներին՝ Պարսկաստանից, հատկապես Խոյից ու Մուշից ներգաղթածների հաշվին: Շահնազար գյուղի գաղթական բնակիչները գաղթել են հիմնականում Մուշի և Ալաշկերտի գավառներից, 1818 թ. նրանք գալիս են Ալեքսանդրապոլ, ապա՝ 1822 թ. վերաբնակվում են այստեղ[15]: XIX դ. սկզբի պատերազմների հետևանքով Արևմտյան Հայաստանից, Պարս

---

[9] *Акты, собранные Кавказской археографической комиссией* (այսուհետև՝ *АКАК*¤, *Тифлис, т. 2, 1868, док. 5.*

[10] *Присоединение Восточной Армении к России* (այսուհետև՝ *Присоединение…*¤, *Сборник документов под. ред. Ц. П. Агаяна, т. 1, Е., 1972, док. 162.*

[11] Տե՛ս **Մելքոնյան Ա.,** Ժողովրդագրական տեղաշարժերը Ջավախքում և Ախալցխայի գավառում 19-րդ դարի առաջին քառորդին (Իրան-նամէ, N 1-2-3, 1998, էջ 14):

[12] **Бутков П.** М., *Материалы новой истории Кавказа, т. 2, СПб., 1869, с. 340, 477.*

[13] **Շախկյան Գ.,** Կայծոն-Շնող հայրենագիտարան, Ե., 1999, էջ 164:

[14] Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 53, ց. 1, գ. 3800, թ. 49-50:

[15] **Լալայան Ե.,** Բորչալուի գավառ, Թիֆլիս, ա. թ., էջ 69:

կաստանից և Ղարաբաղից ներգաղթածների հաշվին ավելանում է նաև Ուռուտ գյուղի բնակիչների թիվը: 1831 թ. գյուղն ուներ 143 բնակիչ[16]: Կուրթանցիների թիվը համալրում են Ղարաբաղից, Երևանից, Ղազախից, Շիրակից և այլ վայրից եկած բնակիչները: 1831 թ. գյուղն ուներ 187 հայ բնակիչ: Զորագյուղի բնակիչները Դսեղ գյուղից եկած գաղթականներ էին: Ղարաբաղցիներից այստեղ վերաբնակվել է ընդամենը 47 տուն՝ 416 շունչ (226 արական, 192 իգական): Լոռվա խոշոր գյուղ Գուգարքը գաղթերի հետևանքով կրկիրն վերականգնում է իր հայկական նկարագիրը: Ներգաղթողների մեջ գերակշռում էին Ղարաբաղի և Իջևանի գյուղերից եկածները: Շիրակամուտը (Նալբանդ) հիմնվել է 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, Վերին Բասենից գաղթածների հաշվին: 1831 թ. ուներ 161 հայ բնակիչ:

1800 թ. փետրվարի 29-ին Վրաստանի թագավոր Գեորգի XII-ի շնորհագրով Դսեղ գյուղը որպես սեփականություն է տրվում Մելիք-Ջումշուդին, որը նրան արտոնում է՝ «…այսուհետև տերը լինել Ղարաբաղի հասարակության, որն ապրում է Դսեղում»[17]: Դարասկզբի պատերազմների շրջանում և հետո այս գյուղում վերաբնակեցումներ գրեթե չեն կատարվել: Բնակիչները հիմնականում եղել են բնիկներ, թեև Դսեղից Համզաչիման են տեղափոխվել Խառատյան, Քոչարյան, Պապոյան, Հախվերդյան, Մատոյան տոհմերի նախնիներից ոմանք[18]: Ղարաբաղցիները Դսեղում երկար չեն մնում: 1805 թ. Մելիք-Ջումշուդը վաճառում է Լոռե բերդը և իր հպատակների հետ վերադառնում Ղարաբաղ[19]:

1826 թ. Շահալի (Վահագնի) գյուղ են վերաբնակվում Արևմտյան Հայաստանից՝ Կարսից, ինչպես նաև՝ Ղազախից, Աչաջրից, Դսեղից, Օձունից, Իջևանից և Ղարաբաղից եկած գաղթականներ: 1831 թ. դրությամբ Գարգառ գյուղն ունեցել է 158 բնակիչ: Արդեն 1878 թ. տվյալներով նրա բնակչության թիվը հասել է 1005 հոգու[20]:

Այս ժամանակաշրջանը համընկավ Ղարաբաղի հայերի՝ դեպի Լոռի գաղթի հետ: Մելիքները քանիցս դիմել էին ռուսական կառավարությանը՝ Ղարաբաղի խաների լուծը թոթափելու և Վրաստանին ենթակա հայկական տարածքներ՝ Ղազախ, Լոռի գաղթելու թույլտվության խնդրանքներով[21]: Նշված տարածքներում Վրաց թագավոր Գեորգի XII-ի հրովարտակի հիման վրա մելիքներին տրվեցին հողեր[22]: Բայց չկարողանալով այստեղ պահպանել իրենց նախկին իրավունքներն ու սովորույթները, չունենալով կյանքի, գույքի ապահովություն, սոցիալ-տնտեսական կայուն վիճակ (որի պատճառով Կովկասի ռուսական զորքերի գլխավոր

[16] Լոռու մարզ…, էջ 142:
[17] *Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 36.*
[18] ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվ, գործ 359, էջ 126:
[19] *АКАК, т. 2, док. 5; Кавказская старина, Тифлис, 1872, N 2, с. 36-37.*
[20] Լոռու մարզ…, էջ 141:
[21] Մատենադարան, Կաթ. դիվան., թղթ. 240, վավ. 41, թ. 1, վավ. 147, վավ. 163, թ. 1-6, *Армяно-русские отношения в XVIII веке (1760-1800 гг.), сб. док. под ред. М. Г. Нерсисяна, т. IV, Е., 1990, с. 501.*
[22] *Кавказская старина, с. 35-36, АКАК, т.1, Тифлис, 1866, с. 123,1158-1163, т. 2, с. 205.*

հրամանատար Ի. Գուդովիչի կարգադրությամբ Երևանի խանությունից այստեղ եկած ղարաբաղցիները վերաբնակեցվեցին Ելիզավետպոլի գավառում[23])՝ մելիքների մեծ մասը վերադարձավ Ղարաբաղ կամ հեռացավ այլ վայրեր: Բուն Լոռվա տարածքում եղել են նաև եկվոր՝ օտար, այլէթնիկ բնակչությամբ գյուղեր:

XIX դ. 30-ական թվականներին ցարական Ռուսաստանն իր դիրքերը ծայրամասային գավառներում ամրապնդելու նպատակով գործի է դնում Հայաստանի ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհների երկայնքով ռուսներ բնակեցնելու ծրագիրը[24]: Լոռին կապող օղակ էր Հայաստանի մնացած գավառների ու Ռուսաստանի միջև, ուստի մեծ թվով ռուսներ բնակեցվեցին հենց Տաշիր-Լոռիում՝ հիմնելով ռուսական գյուղեր՝ Վորոնցովկա (այժմ՝ Տաշիր), Նիկիտինո (Ֆիոլետովո), Մեդովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Միխայլովկա և այլն:

Լոռու տարածքում ապրող ազգություններից ամենաբարձր ծնելություն ունեցող թուրք-թաթարների թիվը 1831 թ. դրությամբ ընդամենը եղել է 369 մարդ: Արդեն 1880-ական թթ. հիմնականում թաթարաբնակ 19 գյուղերից ամենամեծը Սարվանն էր (329 տուն բնակչություն՝ 1283 ար., 921 իգ., ընդ.՝ 2204 հոգի), ապա՝ Գյավուրարխը (270 տ., 1010 ար., 760 իգ., ընդ.՝ 1770), Ղըզըլ-Աջլոն (274 տ., 1069 ար., 767 իգ., ընդ.՝ 1836), Սադախլոն (191տ., 745 ար., 535 իգ., ընդ.՝ 1280), Ֆախրալուն՝ (170 տ., 663 ար., 476 իգ., ընդ.՝ 1139) և այլն[25]: Վրացաբնակ գյուղերից նշանավոր էին Մեծ Գոմարետը, Կալամշան, Միջան և այլն:

Այսպիսով, Լոռվա հայերի մեծ մասը տեղաբնիկ էր, մի մասը՝ գաղթական: Տեղաբնիկ էին օձնեցիք, արդվեցիք, հաղպատցիք, սանահնեցիք, որնակցիք, դսեղցիք, վարդաբլուրցիք, շնողցիք և այլք: Վրացախոս բնիկ հայերը ապրել են Հյուսիսային Լոռիում՝ Գորնջուկ, Բալիճ, Վարդիսուբան, Բոսլև, Փոքր Ռատևան, Ջալտամ, Տաբախմելա կամ Գոբուրեթի, Քվեշ, Փոքր Բոլնիս, Մեծ Դումանիս, Փոքր Դումանիս գյուղերում: Գաղթական բնակիչները, ինչպես տեսանք, հիմնականում եկել էին Ղարաբաղից, Շամշադինից, Ալաշկերտից, Կարինից: Ղարաբաղի գաղթականները տեղավորվել են Բոլնիս-Խաչենում, Դաղեթ-Խաչենում, մասամբ՝ Շնողում, Օձունում, Շահալիում և այլուր, Ալաշկերտի գաղթականները՝ Շահնազար, Մեծ և Փոքր Ղարաքիլիսա, Շիշթափա, Սարչապետ գյուղերում:

Հույները գաղթել են 1763 թ.՝ Գյումուշխանեից, հիմնականում հաստատվել Ալավերդիում, Մադանում և Ախթալայում: Երբ Կարսից արտագաղթում և Փամբակի ու Շիրակի դիստանցիաներում մշտական բնակություն է հաստատում 2264 ընտանիք, նրանց հետ գալիս է նաև 600 հույն ընտանիք[26]: Գերմանացիները գաղթել են 1818 թ. Վյուտեմբերգյան թագավորությունից՝ հիմնելով Եկատերինենֆելդ (Թբիլիսիից 60 կմ հե-

---

[23] **Դիլոյան Վ.,** Արևելյան Հայաստանը 19-րդ դարի 1-ին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 38-39:

[24] *Обзор переселенческого дела на Кавказе, СПб., 1913, с. 2-6.*

[25] **Լալայան Ե.,** նշվ. աշխ., էջ 102:

[26] **Խոջաբեկյան Վ.,** Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Ե., 1979, էջ 29:

ռու՝ Բորչալուի մոտ[27]), իսկ ավելի ուշ՝ 1857 թ. Ալեքսանդրսհիլֆս գաղութները: Հայ բոշաները Էրզրումի գաղթականներ են, վերաբնակվել են տարբեր գյուղերում:

Այսպիսով, վրացական տիրապետությունը Լոռիում, որը XIX դարից փոխարինվեց ռուսականով, չփոխեց տարածաշրջանի էթնո-մշակութային հայեցի պատկերը: Լոռվա գավառում հայկական տարրը նշված ողջ ժամանակաշրջանում կազմում էր բնակչության մեծամասնությունը: Լոռին չենթարկվեց էթնիկ օտարացման գործընթացների, գերազանցապես մնաց հայաբնակ ու միատարր տարածք: Աշխարհագրական անունները ևս չկրեցին վրացական ազդեցություն: Այս ամենը հաստատվում է նաև այն իրողությամբ, որ վրացիներն իրենք էլ Լոռվա տարածքը շարունակեցին կոչել Սոմխեթի՝ Հայաստան:

ЭТНИЧЕСКИЕ МИГРАЦИИ В ЛОРИ В ПЕРВОЙ ТРЕТИ XIX ВЕКА

АМИРДЖАНЯН А. О.

Резюме

По указу царя Павла I от 18 января 1801 г. Картли-Кахет был присоединен к России. Некоторые области Северной Армении, в том числе Лори и Тавуш, в составе Восточной Грузии, примкнули к Российской империи.

Царизм приступил к освоению Восточной Армении, как и всего Кавказа, проводя политику внедрения своих административно-экономических порядков. Царское правительство стремилось заселить эти новые территории (в частности, Лорийскую область) благонадежным для себя населением. В 1821-1834 гг. была произведена всеобщая перепись населения, выявившая этнический состав населения Кавказа. В результате имевших место переселений численность населения Лорийской области возросла зя счет армян, и тем самым Лорийская область осталась армянонаселенным регионом Закавказья.

[27] **Яскорский А., Яскорский Р.,** *Штабы Причерноморья и Кавказа, Е., 2003, с. 117.*